

10158

ԱՄԱՅՈՒԱԾՆԵՐ ՄԱՅՈՒՄԵՏԻ

Ը Ն Տ Ր Վ Ա Ծ

ԼԵՎ. Ն. ՏՈԼՍՏՈՅԻ ՁԵՌՔՈՎ

Թարգմանեց անգլիերէնից

Ս. Դ. ՆԻԿՕԼԱԵՎ

Թարգմ. ուղևորէնից Լ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ելեքտր. տպարան «ԵՊՕԽԱ» Գանձակալա փող. № 3.

1910

297
S-80

3 AUG 2013

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌՍՋԻԿԱՅ 1911 ԹՎԱԿԱՆԻ

II ՏԱՐԻ

„ԱՐՕՐ“

II ՏԱՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ-ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ,
ԳԻՏԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

«ԱՐՕՐԸ» հրատարակելու է Թիֆլիսում՝ խմբագրութեամբ Հ.
Առաքելեանի և աշխատակցութեամբ ուսումնայ, թիւրքահայ և
պարսկահայ գրողներին:

«ԱՐՕՐԻՆ» աշխատակցելու են՝

Ա. Ալաօյանեան, Ա. Աթանասեան, բժշկ. Աղասարեան Բ.,
Առուշան, բժշկ. Արծրունի Վ., Առաքելեան Արշակ, Ա.
Թաթևեան Մ., Բաբգէն եպիսկոպոս Կիւլէսէրեան, Բաշա-
լեան Լևոն, Բաշինջաղեան Գ., Բաբայեան Խ., Գասպարեան
Յարութիւն, գօթոր Գրէնֆիլդ Ջէմս., Դանիէլեան Լ.,
Դը-Գուբերնատիս Անջէլօ, սենատոր (խաւրտկան պրօֆէ-
սոր), Եղեկեան Ա., Եսայեան Ս., Էմմանուէլ ք. Նաղարեան.,
Թեքէեան Վ., բժշկ. Թիրեաքեան Յարութիւն խան, Սանազատ
Ռ., Պուրշիդ, Վալիսա, Կրասիւնիկեան Կ., Ղուլեան Ա., Մալ-
խասեան Ս., Մալխազեան Ա., Մաքլէր Ֆ. (ֆրանսիացի հա-
յագէտ), Մեսրոպ ք. Մելեան, Յարութիւնեան Ի., Նաթա-
նեան Միք., Նաղարէթեան Ա., Նամայեան, բժշկ. Շահբա-
ղեան Ա., բժշկ. Շիսեան Ա., Շահբար, Չալսուշեան Գ.,
Չախմախսաղեան Յ., Սարուխան Ա., Սուրխաթեան, Սա-
մուէլեան Խ., Սպէնդիարեան Յ., պրօֆէսոր Վեսելովսկի Ի.,
Տէր-Մինասեան Ե., Բօֆֆօր Ստ., Բալանթար Ա.

«ԱՐՕՐԸ» ձգտելու է դառնալ հանրամատչելի, ժողովրդական ամ-
բազիր ամենքի համար, տալ հայ ժողովրդին, անողջ, թարմ մտա-

№ 5

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱՐՕՐ» ԱՄՍՋԻԿԻ

03 NOV 2009 № 5

280

1112-50 es

ԱՄԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՅՈՒՄԵՏԻ

297

3-80

Ը Ն Տ Ր Վ Ա



ԼԷՎ. Ն. ՏՈԼՍՏՕՅԻ ԶԵՌԳՈՎ

Թարգմանեց անգլիերէնից

Ս. Դ. ՆԻԿՕԼԱԷՎ

Թարգմ. ուսերէնից Լ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

1005
20582



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ելեքտր. տպարան «ԷՊՕԽԱ» Գանձակայա փող. № 3.

1910

ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԷՏԻ

ՈՐՈՇՔ ԶԵՆ ՄՏԵԼ ՂՈՒՐԱՆԻ Մ Է Զ

Ընարված

ԼԵՎ Ն. ՏՕԼՍՏՕՅԻ ԶԵՌՔՈՎ

Թարգման 'ց անգլիերէնից

Ս. Դ. Նիկօլաէվ

Հնդկաստանում Արդուլլահ Սուրավարդին կազմել է Մա-
հօմէտի ասացուածներէից մի գիրք: Այդ գրքի մակագիրը կազ-
մում է Ղուրանի մի ոտանաւորը:

«Նրանք կամենում են իրանց շնչով հանգցնել Աստծու
լոյսը: Բայց Աստուած կատարելագործում է իր լոյսը, ինչքան
էլ դա անտանելի լինի անհաւատացող մարդկանց»:

Այդ գրքից եղած քաղուածները ընտրել է Լ. Ն. Տօլստոյը,
իբրեւ պարունակող իրանց մէջ ճշմարտութիւններ, որոնք ընդ-
հանուր են կրօնական բոլոր վարդապետութիւններին:

Ով էր Մահօմէտը

Մահօմէտը մուսուլման կրօնի հիմնադիրն էր, մի կրօն,
որ այսօր երկրագնդի վրայ դաւանում են 200 միլիօն մարդիկ:

Մահօմէտը ծնվել է Արաբիայում փրկչական 570 թվա-
կանին: Նա չունի որ ծնողների դաւակ էր և երիտասարդու-
թեան հասակում հովիւ էր: Մատաղ հասակից նա սիրում
էր առանձնանալ անապատ վայրերում և այդտեղ մտածում
էր Աստծու և Նրան ծառայելու մասին: Նրա ժամանակի
արարները շատ աստուածներ էին ճանաչում և որպէս զի հա-
ճայանան նրանց, կատարում էին մի քանի ծէսեր և մատու-

ցանում էին նրանց զոհեր, նոյն իսկ մարդկային: Որքան շատ մեծանում էր Մահամէտը, այնքան նա շատ պարզ էր տեսնում, որ իր հաւատը սուտ է և որ կայ մի ճշմարիտ Աստուած, միակը բոլոր ժողովրդների վրայ:

Մահամէտը ինքն այնքան հաստատ հաւատում էր այդ բանին և այնքան ցանկանում էր այդպէս ևս տանդել այդ հաւատը իր հայրենակիցներին, որ նրա մէջ միտք յղացաւ թէ նա—Աստծու մարդարէն է և թէ Աստուած յանձնել է իրան քանդել սուտ հաւատը և քարոզել ճշմարիտը: Եւ նա սկսեց քարոզել այն ճշմարիտ հաւատը, որ կազմվել էր իր գլխում:

Այդ հաւատի էութիւնը կայանում էր նրա մէջ, թէ Աստուած մի է, ունտի և պէտք չէ երկրպագել շատ աստուածներ, թէ Աստուած զթած է և արդարադատ, թէ ամեն մի մարդի ճակատագիրը կախված է իրանից, այն է, եթէ նա կատարում է Աստծու օրէնքը, նա հանդերձեալ կեանքում կստանայ վարձատրութիւն, իսկ եթէ չէ կատարում օրէնքը, նա կը պատժվի: Այդ հաւատով նա ուսուցանում էր մարդկանց, թէ ամբողջ երկրայինը անցանելի է և չքացող, միայն Աստուած գոյութիւն ունի յաւիտեան, թէ առանց հաւատի առ Աստուած և առանց նրա պատուիրանների կատարման չէ կարող լինել իսկական կեանք. նա ուսուցանում էր, թէ Աստուած պահանջում է մարդկանցից սէր առ Աստուած և առ երկնաւորը: Մէքն առստուած կայանում է աղօթքի մէջ, իսկ առ մերձաւորը—կաբեկցութեան, օգնութեան և թողութեան մէջ:

Մահամէտը ուսուցանում էր և այն, թէ ճանաչելով ճշմարիտ Աստծուն, մարդիք պէտք է ճգնեն հոռացնել այն ամենը, ինչ որ նպաստում է կրքերի զարգացման մարդի մէջ: Չպէտք ծառայել մարմնին, այլ հոգուն: Պէտք է ժուժկալ լինել կեւակրի մէջ: Չպէտք է գործածել ոգելից, գրգռիչ խմիչք: Պէտք է անցկացնել կեանքը աշխատութեան մէջ:

Մահամէտը իրան չէր համարում միայնակ մարդարէ Աստծու: Իր նման մարդարէներ էր համարում նաեւ Մովսէսին և Յիսուսին: Նա ասում էր, որ քրիստոնեաները և հրէաները չըպէտք է լիտեն հաւատը, այլ միայն կատարել այն, ինչ որ ուսուցել են իրանց մարդարէները:

Քարոզչութեան առաջին տարիները Մահամէտին վիճակվեց, ինչպէս ամեն մի նոր վարդապետութեան քարոզչի, խիստ հալածանք կրել նախկին կրօնի կողմնակիցներից: Բայց այդ հալածանքները չկանգնեցրին նրան և նա շարունակեց քարոզել: Նոր հաւատն ընդունողները տարբերվում էին միւս ա-

րարներից իրանց համեստութեամբ, ժուժկալութեամբ, աշխատասիրութեամբ և բարեկեցութեամբ, որովհետեւ ջանք էին գործ դնում պահպանել աղէտի ենթարկված իրանց եղբայրներին: Նոր համայնքը շուտով սկսեց ձեռք բերել իր շրջապատողների համարումը և յարգանքը և նոր հաւատին յարում էին հետզհետէ բազմաթիւ մարդիկ: Բայց շուտով տաքարիւն մարդիք, Մահամէտի կուսակիցներ, զայրանալով իրանց շուրջը տարածված կոռուպցիոնիստ և անառակութեան վրայ, սկսեցին դրդուել Մահամէտին ոյժով դարձնել մարդկանց իր հաւատին: Հերքելով պատերազմը և բռնութիւնը հասարակական, նիւթական գործերում, նրանք թոյլատրում էին պատերազմիկ գործողութիւններ հաւատի գործերում. մտածելով որ կը հաճոյանան Աստծուն նրանով, որ կը տանեն Նրան աւելի շատ մարդիք ոյժով և ոչ համոզմամբ:

Մահամէտի ուսման այդ ոյժով տարածմամբ և կարելի է բացատրել այն, որ նա մեծ ընդդիմադրութեան հանդիպեց հեղրուղաշականների և քրիստոնեաների կողմից: Չնայելով մահմեդական երիւ բաքերի խստութեան և կեանքի մաքրութեան, որ համակրութիւն և յարգանք էր առաջ բերում ամենքի մէջ, այդ վարդապետութիւնը չտարածվեց այնպէս լայն, ինչպէս այն միւս վարդապետութիւնները, որոնք քարոզում էին հեղուցիւն, ուղորմածասիրութիւն, և ընդունում էին, թէ մարդկանց կեանքը և մահը տրամադրելը պատկանում է միայն Աստծուն:

Ն. Գ.

(Ընդ խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի)

ՀԵՂԻԱԿԱՆ ԿԱԶՄՈՂԻ ԱՌԱՋԱԲԱՆՅ

«Մենք ամենքս Աստծուց ենք և ամենքս նրան ենք դիմում: Մենք ամենքս Աստծու զաւակներ ենք և մեր կեանքը՝ անդադար մերձեցումն է առ Նա: Աստուածութեան կայծը թաղնուած է ամեն մի մարդի սրտի մէջ:

Մեր հաւատը առաջարկում է փրկութեան յոյս ամենքի համար: Այն հոգին, որ յարգում է Ամենակատարողին, որ որոնում է ճշմարտութիւն և վարվում է առաքինի, կունենայ յաւիտենական կեանք:

ՄԱՀՕՄԷՏԻ ԸՆՏԻՐ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻՅ

Մահօմէտը քնած էր արմաւենու տակ և, յանկարծ, արթնանալով, տեսաւ իր առաջ կանգնած իր թշնամի Դիւտուրին, որը բարձրացրելէր նրա վրայ մերկ սուրը: «Հապա, Մահօմէտ, ո՞վ կը փրկէ քեզ այժմ մահից» — բացականչեց Դիւտուրը: «Աստուած», — պատասխանեց Մահօմէտը: Դիւտուրը իջեցրեց սուրը: Մահօմէտը խլեց նրա ձեռքից սուրը և իր հերթին բացականչեց. «Հապա, Դիւտուր, այժմ ո՞վ կը փրկէ քեզ մահից»: — «Ոչ ոք», — պատասխանեց Դիւտուրը: «Արդ, իմացիր, որ միևնոյն Աստուածն էլ կը փրկէ քեզ» — ասաց Մահօմէտը, վերադարձնելով նրան իր սուրը: Եւ այդ օրվանից Դիւտուրը դարձաւ մարդարէի հաւատարմագոյն բարեկամներից մէկը:

Ո՛վ Տէր, շնորհիր ինձ սէր առ Քեզ. շնորհիր ինձ սէր ասածելու. դէպի այն մարդիկ, որոնց Դու սիրում ես. արա՛ այնպէս, որ ես կարողանամ կատարել այնպիսի գործեր, որոնք արժանի են Քո սիրոյ. այնպէս արա՛ որպէսզի Քո սէրը ինձ համար դառնայ աւելի թանգագին քան իմ անձը, աւելի թանգագին քան իմ ընտանիքն ու հարստութիւնը:

Ասացէ՛ք ճշմարտութիւնը, թէ՛կուզ նա լինի դառն և անախորժ մարդկանց համար:

«Օգնիր քո եղբայր մահօմէտականին, առանց հարցաքննելու թէ՛ ով է նա. կեղեքի՛՛ թէ՛ կեղեքվող» — ասաց Մահօմէտը: «Բայց ինչպէս կարող ենք մենք օգնել նրան, երբ նա կեղեքի՛՛ է՞» հարցրին մարդարէին: Մահօմէտը պատասխանեց. «Օգնիր կեղեքողին հետու մնալու կեղեքելուց»:

Աստուած ասաց. «Նրան, ով բարի գործեր է կատարում, ես կը վարձատրեմ տասն անգամ աւելի, և էլ աւելի դրանից, որին կուգնենամ. և նրան, ով չարութիւն է գործում, նոյնպիսի

սի հատուցումն կը լինի, եթէ ես չհերեմ նրան: Եւ ով ուզում է մօտենալ ինձ մի թիզաչափ, նրան ես կը մօտենամ մի կանգուն (արմկաչափ), իսկ ով ուզում է մօտենալ մի կանգուն, նրան ես կը մօտենամ տասն-երկու կանգուն. ով կը զայ ինձ մօտ քայլելով, ես նրա մօտ կը գնամ վազելով, և ով կը կանգնի իմ առջև մեղքերով ծանրաբեռնված, բայց հաւատալով ինձ, նրա հանդէպ կը կանգնեմ ես, լիովին պատրաստ ներումըն շնորհելու նրան»:

Ով Տէր իմ, պահիր ինձ աղքատութեան մէջ՝ կենդանութեանս ժամանակ և թոյլ տուր ինձ մեռնելու աղքատ:

Երբ մի մարդ իր սեփական աշխատանքով ձեռք բերված փողը վաստակից ըստ չափու կարողութեան օգնութիւն է հասցնում մի ուրիշին, այդ Աստծու համար ամենահաճելի ողորմութիւնն է լինում:

Ոչ ոք չէ խմել աւելի լաւ ըմպելիք, քան այն մարդը, որ կ'անել է բարեկութեան խօսքը յանուն Աստծու,

Ոչ ոք չէ կարող իսկական հաւատացեալ լինել, եթէ նա չէ ցանկանում իր եղբոր համար միևնոյնը՝ ինչ որ կը ցանկանար իր համար:

Դժոխքը թաղնված է զուարճութիւնների ետևում, իսկ զրախորդ — աշխատանքի ու զրկանքների:

Աստուած ասում է. «Ո՛հ, մարդ, հետևիր միայն իմ օրէնքներին, և դու կը նմանես ինձ. դու կ'ասես. «Թող լինի» — և այնպէս էլ կը լինի*»:

Մի մեոցրէք ձեր սրտերը աւելորդ ուտելիքով և ըմպելիքով:

Հրեշաակները ասացին. «Ո՛վ Աստուած, կա՞յ, արդեօք, Քո

*) Այսինքն եթէ մարդ պարում է միանգամայն համապատասխան ասկեզերքի կենքի ու բնութեան օրէնքների, այն ժամանակ նրա կամքը ևս համաձայնութեան մէջ է գտնվում Աստծու կամքի հետ, և ինչ որ էլ կ'ամենայնա, ամեն ինչ կը յաջողվի նրան:

ստեղծածների մէջ որ և է մի բան աւելի ամուր, քան քարերը»։ Աստուած ասաց. «կայ. երկաթը ամուր է քարերից, որովհետեւ նա նրանց փշրում է»։ Հրեշտակները ասացին. «Օ՛, Տէր, Քո ստեղծածների մէջ կայ, արդեօք, աւելի ամուր բան, քան երկաթը»։— «Կայ, — ասաց Աստուած. — կրակը ամուր է երկաթից, որովհետեւ նա նրանց հալեցնում է»։ Եւ հրեշտակները ասացին. «Օ՛, Տէր, կայ, արդեօք, Քո ստեղծած բաների մէջ որ և է աւելի ամուր բան, քան կրակը»։ Աստուած ասաց. «կայ. ջուրը աւելի ամուր է քան կրակը, որովհետեւ նա կանգնեցնում է և հանգցնում կրակը»։ Այն ժամանակ հրեշտակները ասացին. «Օ՛, Տէր, կայ, արդեօք, Քո ստեղծած բաների մէջ որ և է աւելի ամուր բան, քան ջուրը»։ Աստուած ասաց. «կայ. քամին ջրիցն էլ ամուր է. նա յուզում և հալածում է նրան»։ Նրանք ասացին. «Օ՛, Տէր, կայ, արդեօք, Քո ստեղծած բաների մէջ որ և է աւելի ամուր բան, քան քամին է»։ Աստուած ասաց. «կայ. Ազամի զաւակները, որ ողորմութիւն են տալիս, մարդիկ, որոնք ձախ ձեռքով թաղցնում են այն, ինչ որ նրանք շնորհում են աջ ձեռքով, կը յաղթեն ամեն բանի»։

Աստուած ասում է. «Ես մի անյայտ գանձ էի. կամեցայ յայտնի լինել։ Եւ ահա, ես ստեղծեցի մարդուն»։

Մի չարախօսիւր ոչ ոքի։ Եւ եթէ որ և է մէկը կը սկսի չարախօսել քեզ և ի ցոյց դնել քո այն բոլոր արատները, որ նա գիտէ քո մէջ, մի մերկացնի այն արատները, որը դու գիտես նրանում։

Այն ինչ որ օրինական է, — պարզ է, և այն ինչ որ ապօրէն է — նոյնպէս պարզ է. սակայն կայ կառնածելի բան թէ նրա և թէ միւսի միջև։ Երբ քեզ մի այդպիսի կառնածելի բան հանդիպելու լինի, ղսպիր քեզ ու ոչինչ մի անիւր։

Ով գթոտ է գէպի Աստուծո ստեղծվածները, գէպի նա գթած է վերաբերվում Աստուծո. ուստի եղիր գթոտ գէպի մարդիկ աշխարհումս, լինեն նրանք բարի թէ չար, — իսկ լինել գեթոտ գէպի չարը, նշանակում է յետ կանգնեցնել նրան չարից։

Մի անգամ Մահօմէտին երբ հարցրին թէ ինչու՞ն է կայանում ամենաբարձր հաւատը, նա պատասխանեց.

«Արէք բոլոր մարդկանց այն, ինչ որ դուք կը կամենա-

յիք, որպէսզի մարդիկ նոյնը ձեզ անէին, և մի արէք ուրիշներին այն, ինչ որ չէիք կամենայ որ ձեզ անէին»։

Ամեն մի հաւատացեալ մահօմէտականի անկեղծութեան փորձութիւնը կայանում է նրա մէջ, որպէսզի անուշադիր թողնենք այն բոլորը, ինչ որ նրա իշխանութիւնից դուրս է գտնվում։

Աստուած շինել է մի ուղիղ ճանապարհ երկու պատերով՝ կողքերից, նրանց մէջ բացված դարպասներով, որոնք ծածկված են վարադուրներով։ Այդ ճանապարհի սկզբում կանգնած է կարգադրիչը, որը ասում է. «Գնացէք ճանապարհով ուղիղ, առանց թեքվելու այս ու այն կողմ»։ Իսկ այդ կարգադրիչից աւելի վեր կանգնած է մի ուրիշը, որ ասում է գէպի դարպասները մօտեցող ամեն մէկին. «Մի մտնէք այս դարպասները այլապէս դուք, հաւանօրէն, վայր կընկնէք»։ Եւ ահա, այդ ճանապարհը կեանքն է. նրանց մօտ գտնվող բաց դարպասները այն գործերն են, որոնք արգելված են Աստուծո կողմից. վարադուրները, որոնցով ծածկված են դարպասները, Աստուծո կողմից որոշուած սահմաններն են. առաջին կարգադրիչը Աստուծո խօսքն է, իսկ երկրորդը՝ Աստուած, որ գտնվում է ամեն մի հաւատացեալի սրտում։

Ողորմութիւն տալը ամեն մի հաւատացեալի պարտականութիւնն է։ Նա, ով դրա համար միջոցներ չունէ, թող բարի գործեր կատարէ և հետեւ ֆուայ չարութիւնից. այդ էլ կը լինի նրա արած ողորմութիւնը։

Ամեն մի ցանկաւէր հայեացք՝ շնանալ է, և երբ կինը օժ-վում է անուշահոտ իւղերով ու ժողովարան գնում, ուր կան տըղամարդիկ, իրան ցոյց տալու ցանկութեամբ, հեշտասէր հայեացքով, այդ տեսակ կինը շնացող է։

Մի անգամ Մահօմէտը ասաց Բաբիլոնին. «Ճշմարիտ չէ, արդեօք, որ դու եկել ես հարցնելու ինձ՝ թէ ինչ բան է բաբիլոն և ինչը՝ չարը»։ Այն, պատասխանեց նա, եւ եկել եմ հէնց այդ բանի համար»։ Այն ժամանակ Մահօմէտը իր մատնեքը թաթախեց միւսօնի մէջ, և կպցնելով նրա կրծքին, նշան, արեց գէպի սիրտը, ու ասաց. «Հարցրու խրատներ քո սրտից»։ Այդ խօսքերը նա կրկնեց երեք անգամ, և ապա ասաց. «Բա-

ըին այն է, որ քո սրտին տալիս է ամբողջին և խաղաղութիւն, իսկ չարը՝ այն, որ քեզ երկբայութեան մէջ է ձգում, թէկուզ մի այնպիսի ժամանակ, երբ ուրիշ մարդիկ արդարացում են քեզ»:

Իո՞ւր չէք մտնի Աստծու արքայութիւնը մինչև որ հաւատ չունենաք, և դուք ձեր հաւատը կատարած չէք լինի մինչև որ չսիրէք միմեանց:

Հեղութիւնն ու խոնարհութիւնը իսկական հաւատի շատաւիղներն են, իսկ դատարկ քարոզներն ու դարդարանքները՝ շողոքորթութիւն շատաւիղները:

Աւելի լաւ է նստել միայնակ, քան չարերի հետ: Բայց աւելի լաւ է նստել բարի մարդկանց հետ, քան միայնակ լինել: Եւ աւելի լաւ է որ խօսէ գիտութիւն որոնողը, քան թէ լութիւն պահպանէ, բայց աւելի լաւ է լռել, քան դատարկաբանել:

Մեծ պարգև կը տայ Աստուած այն մարդուն, որը խելդում է իր զայրոյթը այն ժամանակ, երբ կարող էր ուրտայայտել նրան:

Գործողութիւնները կը դառնան գիտաւորութիւնների համաձայն:

Աստուած սիրում է այն մարդկանց, որոնք իրանց ապրումները ձեռք են բերում իրանց աշխատանքով:

Միայն նա է ճշմարտութեան իսկական մշակի, ով համբերատար է ծախողութիւնների ժամանակ և մոռացկոտ է կրած վիրաւորանքների վերաբերմամբ:

Իսկական համեստութիւնը բոլոր առաքելութիւնների աղբիւրն է:

Սոսնց համեստութեան և ողջախոհութեան չի կարող հաւատ լինել: Բարութիւն անելու գործում եղէք հաստատակամ:

Երանեալ է նա, ով տեսնելով բարին, գոհութիւն է յայտնում Աստծուն, իսկ դժբաղդութիւնների մատնվելով, համբու-

րութեամբ տանում է նրանց: Միշտ էլ նա վարձատրված է լինում Սատծուց:

Իսկական ուղին գտած մարդիկ չեն շեղվի նրանից, եթէ վիճաբանութեան չբռնվէին:

Աստծու ամենակատարի թշնամիները այն մարդիկ են, որոնք իրանց հաւատացեալ են անուանում, բայց գործում են անարդար գործեր և յանդգնաբար թափում են մարդկանց աւրիւնը:

Գերեզմանը դէպի յաւիտենականութիւնը տանող առաջին աստիճանն է:

Ամենասրբազան պատերազմը այն է, երբ մարդը յաղթում է ինքն իրան:

Զննողութեան մի ժամը աւելի լաւ է, քան բարեհաճութեան մի տարին:

Աղօթքը միացնում է հաւատացեալին Աստծու հետ հոգու աղնութեամբով:

Մահը մի կամուրջ է, որ միացնում է բարեկամը բարեկամին:

Ես պարծենում եմ նրանով, որ աղքատ եմ:

Հաւատացեալը մեռնում է Աստուածային կամքին նվիրված և յուսալով նրա բարութեանը:

Ոչ մի բան այնքան ատելի չէ Աստծուն, որքան այն, որ մարդիկ, տղամարդիկ ու կանայք, փոխանակ ծառայելու Աստծուն, շնութիւն են գործում:

Աստուած զթած է դէպի այն մարդը, ով իր սնունդը հայթայթում է ոչ թէ մութալով, այլ իր աշխատանքով:

Պարգևը այնքան մեծ է լինում, որքան որ մեծ է դժբաղդութիւնը:

Իր հաւատը խոստովանելուց յետոյ Մաճմէտը սովորաբար ասում էր. «Օ, Տէր, աշխրհում եմ Բեզ, ոյժ տուր ինձ հաստատուն մնալու իմ հաւատի մէջ և պատրաստ լինելու գնալու համար ուղիղ ճանապարհով. Աղերսում եմ տուր Բո օգնութիւնը որպէսզի կարողանամ Բո աչքում զթութիւն վաստակել և արժանավայել կերպով մեծարեմ Բեզ, ալաչում եմ Բեզ այն ևս, որ դու շնորհես ինձ անմեղ, արատից զզվող սիրտ, և արդարաւստ լեզու, խնդրում եմ Բեզ նոյնպէս, որպէսզի Դու շնորհես ինձ այն, ինչ որ Դու համարում ես աւարքինութիւն, հեռու պահելով այն բոլորից, որը Դու համարում ես արատ, և որպէսզի Դու ներես ինձ այն իմ գործած մեղքերը, որը Դու իմանում ես:

Գիտեմ, արդեօք, թէ ինչն է խախտում մեր հաւատի բուն հիմքը և ինչը տապալում նրան: Դա մեկնաբանողների սխալներն են, կեղծաւորների վիճաբանութիւնները և ուղիղ ճանապարհից շեղված իշխանաւորների հրամանները:

Կիսը տղամարդու երկրորդ կէտն է:

Գիտութիւնը ֆեաւ է կրում, երբ նրան մոռանում են, սակայն նա բոլորովին է կորչում, երբ նրան աւանդում են անարժանին:

Այդ հիմ է գիտունը: Նա, ով կատարում է այն ինչ որ ինքը գիտէ:

Մօտ է այն ժամանակը, երբ մեր հաւատից չի մնայ ոչինչ, բացի նրա անունից, Դօրանից ևս ոչինչ, բացի նրա արտաքինից երբ մզկիթներում այլ ևս չի լինի ոչ ուսմունք, ոչ Աստուածապաշտութիւն, երբ գիտունները կը դառնան երկրիս վրայ ապրող մարդկերանցից ամենավատթարը, երբ վէճերն ու հայհոյաբանութիւնները կը բղխեն նրանցից ու կանդրադառնան զէպի նրանց:

Գիտութեան ձգտելը աստուածային պատուիրան է ամեն մի հաւատացեալի համար. բայց գիտութեան մասնակից անել անարժաններին՝ կը նշանակէ մարգարիտը, թանգագին քարեղէններն ու ոսկին խողերի պարանոցը հագցնել:

Խրատները լինում են երեք տեսակ. այնպիսիները, որոնց

ճշմարտութիւնը անկասկածելի է, հետեւիւր նրանց. — այնպիսիները, որոնք շեղում են ճանապարհից մարդուն, հեռու կաց նրանցից, և այնպիսիները, որոնք անորոշ են. Աստուծոյ խնդրիւր նրանց մեկնութիւնը:

Հաւատացողները չեն մեռնում. նրանք միայն փոխադրվում են այս ապականեալ աշխարհից յաւիտենական դոյունութեան աշխարհը:

Ճշմարիտ հաւատացեալը շնորհակալութիւն է յայտնում Աստծուն առաջագիմութեան օրերում և ապաւինում է նրա կամքին ձախորդ օրերում:

Յոյս դիր Աստծու վրայ, բայց կապիր քո ուխտը:

Թանգագին է տիեզերքը և այն ամենը, ինչ որ կայ նրանում. բայց ամենից թանգազինը, որ կայ նրա մէջ, այդ կնոջ առաքինութիւնն է:

Բանաստեղծներից և ոչ մէկը չէ ասել աւելի ուղիղ Լէբի տից. «Գիտեմ, որ ամենայն ինչ ունայնութիւն է, բացի Աստծուց»:

Յարէք ճշմարտութեանը, և հեռացէք ստից:

Անվայել է հաւատացեալին արատաւորել որեւէ մէկի պատիւը. անվայել է անիծել որեւէ մէկին, անվայել է չարախօսել, և անվայել է հաւատացեալին դատարկաբանել:

Խուսափեցէք նկատողութեան առնել և դատապարտել մարդկանց թերութիւնները, մանավանդ այնպիսիները, որպիսիները կան հէնց ձեզանում:

Որքան կարելի է աւելի շատ լսել և մնալ հոգու լաւ տրամադրութեան մէջ — կարող է դրանից աւելի լաւ բան լինել:

Ջգոյշ եղէք վեց դէպքերում. երբ խօսում էք՝ խօսեցէք ճշմարտութիւնը. երբ դուք որեւէ բան խօստանում էք՝ կատարեցէք, ձեր պարտքերը վճարեցէք, եղէք ժուժկալ մտածմունքներով և գործերով. զսպեցէք ձեր ձեռքը ամեն տեսակ բռնութիւններից և հեռու կացէք բոլոր վատ բաներից:

Աստուած խրատում է մեզ լինել հեզ, պատկառող և ոչ հպարտ, այնպէս, որ ոչ մի մարդ չկեղեքէ մի ուրիշին:

Նա մեզ հետ չէ, ով կանչում է ուրիշներին օգնելու իրան կեղեքելու գործում, նա էլ մեզ հետ չէ, ով պաշտպանում է իր ժողովուրդը անարգար գործում, նա ևս մեզ հետ չէ, ով մեռնում է, օգնելով իր ժողովուրդին հաստատելու. կամայականութիւնը:

Ձեր սէրը դարձնում ձեզ խուլ և կոյր:

Չունի կատարեալ հաւատ այն մարդը, ով չէ ցանկանում իր եղբորը միևնոյնը, ինչոր կը ցանկանար իր համար:

Նա ով դատարկաբանութիւնից իրան զսպող մարդու սիրտ և լեզու չունի, չէ կարող հաւատացեալ լինել:

Կրօնական ծէսերի կատարումը չի կարող քաւութիւն տալ չարախօս լեզուի յանցանքներին:

Ասեմ ձեզ թէ որն է ծոմապահութիւնից, ողորմածութիւնից և աղօթքներից լաւը: Դա բարեկամի հաշտվելն է բարեկամի հետ. որովհետեւ թշնամութիւնն ու քէնը զրկում են մարդուն Աստծու շնորհից:

Աստուած բանականութիւնից աւելի լու բան ոչինչ չէ ասել,—ոչ մի բան աւելի կատարեալ ու գեղեցիկ. այն բարիքները, ինչ որ Նա տալիս է մարդկանց, Նա տալիս է ի սէր Նրա. իսկ բանականութիւնից էլ առաջ է գալիս Աստծու քմրոնումը:

Աստուած ինքն էլ հեզ է ու ողորմած: Նա էլ տալիս է խոնարհներին այն, ինչ որ չէ տալիս անողորմներին:

Նա չէ հզօրն ու ուժեղը, ով տապալում է մարդկանց, այլ նա, ով զսպում է իր բարկութիւնը:

Հարստութիւնը ստացվում է ոչ թէ երկրային բարիքների առատութիւնից, այլ հոգու բաւականութիւնից:

Մի անգամ Մահօմէտը քնած էր խորի վրայ և վեր կացաւ պառկած տեղից շատ կեղտոտված նրանով: Մարդուն մէ-

կը ասաց նրան. «Ոհ, Աստծու առաքեալ: Ոչ, եթէ դու կամենայիր, ես կուղարկէի քեզ փափուկ անկողին: Մահօմէտը պատասխանեց. «Իմ ինչին է պէտք այս աշխարհը: Ձէ՞ որ ես այստեղ, իբրև մի ճանապարհորդ եմ, որը մտել է ծառի ստուերի տակ և իսկոյն էլ դուրս է գալու նրա տակից»:

Երբ դուք տեսնում էք մի մարդ, որը ձեզանից աւելի է օժտված հարստութեամբ կամ գեղեցկութեամբ, այն ժամանակ մտածեցէք այն մարդկանց մասին, որոնք ձեզանից աւելի քիչ են օժտված:

Նայեցէք այն մարդկանց, որոնք ձեզանից աւելի ցածր աստիճանի վրա են կանգնած. Այդ կը նախապաշտպանէ ձեզ զէպի Աստծու շնորհները արհամարհանքով վերաբերվելուց:

Մի մարդ եկաւ Մահօմէտի մօտ և ասաց. «Ճշմարիտ, ես սիրում եմ քեզ: Մահօմէտը պատասխանեց նրան. «Մտածիր՝ թէ ինչ ես դու ասում»: Եւ այդ մարդը ասաց. »Երգվում եմ, որ ես սիրում եմ քեզ», և կրկնեց այդ խօսքերը երեք անգամ: Այն ժամանակ Մահօմէտը ասաց նրան. «Եթէ դու անկեղծ ես, ուրեմն պատրաստվիր աղքատութեան համար, որովհետեւ աղքատութիւնը կը հասնի նրան, ով սիրում է ինձ, աւելի շուտ, քան հեղեղը ծովին»:

Երկու մարդկանց մէջ իրաւախօսութիւն անելը ողորմածութիւն է, և մարդուն օգնելը որպէսզի թամբնաւոր և նրա ստպրակը քարձրացնելը ողորմածութիւն է. և բարի խօսքը, որ ասում են շնունակալութեան փոխարէն, և հարց տվողին համեստ պատասխան տալը ողորմածութիւն է և այն բոլորի վերացումը, որոնք անյարմարութիւն են պատճառում մարդկանց, որպէս փշեր կամ ճանապարհի վրայ ընկած քարեր, դա ողորմածասրտութիւնն է:

Աստուած ասում է. «Իմ սիրեցեալի համար ես լսելիք եմ, որով նա լսում է, ես տեսողութիւն եմ, որով նա տեսնում է, ես ձեռքեր եմ, որոնցով նա վերցնում է, և ոտեր, որոնցով նա քայլում է»:

Ինչպէս որ շփումը հողին մաքրում է երկաթը, այնպէս և յիշողութիւնը Աստծու մասին մաքրում է մարդու սիրտը:

Իւրաքանչիւր բարի գործ ողորմութեան գործ է, և միթէ բարի գործ չէ հանդիպել իր եղբօրը ողջոյնով և իր տկից ջուրը ածել նրա կուժերը:

Մահօմէտը հարցրեց. «Ինչպէ՞ս էք կարճում, որ և է մի կին իւր երեխային կը ձգէ, արդեօք, կրակը: Նրան պատահախանցին. «Ո՛չ»: Այն ժամանակ Մահօմէտը ասաց. «Իսկ Աստուած չէ որ աւելի է կարեկից դէպի իր արորածները, քան կինը դէպի իր երեխան»:

Նա, որ յափշտակում է այն, որից պէտք է օգտվեն բոլոր մարդիկ,—մեղաւոր է և օրէնքը խախտող:

Տուր աշխատաւորին իր վարձը առաջ, քան կը չորանայ նրա քրտինքը:

Վարվիր փողոցութեամբ մարդկանց հետ և մի լինիր կուպիտ. եղիր սիրալիր նրանց հետ ու մի արհամարհի նրանց: Եւ երբ դու կը պատահես հրէադաւաններին ու քրիստոնեաներին, որոնք կը սկսեն հարց ու փորձ անել քեզ արքայութեան բանալիներին մասին, ասա նրանց, որ արքայութեան բանալիները կայանում է նրանում որ նրանք վկայեն Աստուածային ճշմարտութիւնը և բարի գործեր գործեն:

Գթասրտութիւն է, երբ դուք սիրալիր կերպով ժպտում էք ձեր եղբօրը. գթասրտութիւն է, երբ դուք զրդում էք մարդուն առաքինի արարքների և յետ էք կասեցնում ապօրէն գործերից: Գթասրտութիւն է, երբ դուք ճանապարհ էք ցոյց տալիս մոլորվածներին, և երբ դուք օգնում էք կոյրին:

Սիրում էք դուք, արդեօք, ձեր Արարչին: Եթէ այո, ուրեմն դուք նախ և առաջ սիրում էք մարդկանց, ձեր եղբայրակիցներին:

Հետեւել իմաստունի խօսքերին և ուրիշներին ներշնչել սէր դէպի ճշմարտութիւնը, աւելի լաւ է քան կատարել օրէնքի հրահանգները:

Աստուծա առաջ ամենից աւելի յարգի է նա, ով ներում է իր իշխանութեան ներքոյ գտնվող զրկողին:



Լոր և հոգեւոր մնունք, դիտել հայկական իրականութիւնը և առանց հաշտվելու նրա հետ, անդադար պայքարել, կռիւլ գիտութեան և գեղարուեստի միջոցով ստարնութեան, պոետիկութեան հետ, որոնցով այսօր համակված է հայկական կեանքը: Վերածնութիւն հայկական կեանքի, մտաւոր և բարոյական — ահա «ԱՐՕՐԻ» ձգտումները մինչ: Ժողովրդականացումն գիտութեան — ահա «ԱՐՕՐԻ» մի այլ ձգտումը. սերմանումն հայ ժողովրդի մէջ համամարդկային պաղափարների, խաղաղասիրութեան, եղբայրական և մարդկային համերաշխութեան — ահա «ԱՐՕՐԻ» երրորդ ձգտումը:

«Արօրը» տպագրելու է ամեն մի համարում գոնէ երկու ամբողջական յօդուածներ՝ գլխաւորապէս կենսագրական և գիտական բովանդակութեամբ, որոնցից բաժանորդները կարողանան կազմել առանձին բօշխմաներ և այդպիսով տարվայ ընթացքում, ունենան գոնէ 242 ԱՏ ԳՐԳՐՈՅԿՆԵՐ:

Կամենալով հնարաւորութիւն տալ Թիւրքահայ և Արեւմտեան հայ գրողներին մասնակցել «Արօրին» և դրանով գրական ու մտաւոր սերտ յարաբերութիւններ ստեղծել արեւելեան և արեւմտեան հայ գրական գործիչների միջև, «Արօրը» հրատարակվելու է հայկական հին, այն է ընդհանուրից ընդունված ուղղագրութեամբ: Մակայն նրա էջերը բաց են լինելու և Վ-ի ուղղագրութեան քարոզողների առաջ:


«Արօրը» աշխատելու է ասպարէզ քաշել երիտասարդ, թարմ, սկսնակ ոյժերը և դեկավարել նրանց գրական գործունէութիւնը:

«Արօրի» բաժանորդագիրն է «Մշակի» բաժանորդների համար 4 ռ. ոչ-բաժանորդները վճարում են 2 ռ. աւելի:

Գրամ և թղթակցութիւն ուղարկել այս հասցեով՝ Тифлисъ, редакция журнала „АРОР“. Tiflis, Rédaction du la revue armenienne «Aror».

Թիֆլիս «Արօր» ամսագրի խմբագրութիւն

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԵԿ